

Յեղապետական ձևը ընդունելով իրրեւ նախնի պետական ձև, չենք կարող չենթադրել որ նա եղած է միշտ կիսանկախութեան իշխանութիւն մը և ստացեր շարունակական բնաւորութիւն հանդէպ ամբողջական իշխանութիւններու. նման պարտիզանական պատերազմներու, որ դիւրութեամբ կը ստեղծուին և տեւականութեան անյարմարութիւններ չեն կրեր, ինչպէս հրատարակուած մեծ ու ամբողջական պատերազմները՝ որոնք իրենց պատրաստութեամբ ծանր ու անտանելի են, իսկ գործադրութեան զրուած ժամանակը՝ սարսափելիօրէն դժուար ու աղիտարեր :

Այս եզրակացութիւնները ցոյցանելու համար է որ առաւելագլխաւ առաջ կը բերենք այդ պատմուածքը իրր ծանօթութիւն (*) :

(*) . — «Հայաստան, Գրգստան և Արեւմտեան Պարսկաստան» Բաբելալան—Ասորեստանեայց սեպագրերու համաձայն» .

Մադաի. (Մատաի, Ամադաի) :

«Մադաի ըստածներն առաջին անգամ կը յիշուին — Ամադաի ձևով Սաղմանասար Բ.ի ժամանակ : Ասիկա թագաւորութեանը 24րդ տարին նախ Ամադաի ըստածներուն երկիրն է և սպա Արագիաշ և Հարհար իջու :

Մադաիացիք Տեգրաթալիդեսեր Գ.ի շատ հոգ ու աշխատութիւն պատճառեցին : Թագաւորն անձամբ անոնց դէմ երկու անգամ արշաւեց 744 և 757 (Թագաւորութեանը 2րդ և 9րդ տարիներունը : Արձանագրութեանց ՚մէջ երկայն ցուցակներ պահուած կան մթազոյն Մարաց այն գաւառներուն, զորոնք առած է այս թագաւորը :

Այս գործառնութեանց առաջինն է յայտնապէս այն տեղեկութիւնը, որ կ'ըսէ թէ Ասորեստանցայց թագաւորը 60,500 հոգի և անոնց ստացուածքը, ձիերը, . . . ուղտերը, եղերն ու ոչխարաց անհամար հօտերն առաւ տարաւ :

Երկրորդ արշաւանքին հետեւութիւնն եղաւ 8,650 հոգւոյ . . . (պակաս կամ եղծեալ մաս) . . . 300 ջրուոյ, 660 իշու, 1,350 արջառի, 19,000 ոչխարի տարուիլը :

Ըստ երևութի, Սարգոն ամենէն աւելի սաստկութեամբ կռուած է